ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Ռուստամ Բադասյան և Քրիստիննե Գրիգորյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019 թվականի դեկտեմբերի 4-6-ը և ս.թ. դեկտեմբերի 5-6-ը:

Հրավիրող կողմը՝ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի ղեկավար կոմիտե:

Գործուղման նպատակը՝ «Արևելյան գործընկերությունը հանուն ԵՄ-ի» խորագրով համաժողովի մասնակցելը:

Քննարկված թեմաները՝ Համաժողովը նվիրված է եղել գործընկերության խորացման և թափանցիկության մեխանիզմների ապահովմանը, մասնավորապես, բացահայտելու արդյունավետ կառավարման շրջանակներում թվային լուծումները և այդ համատեքստում հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը 2019 թվականի դեկտեմբերի 4-6-ը և ս.թ. դեկտեմբերի 5-6-ը մասնակցել են «Արևելյան գործընկերությունը հանուն ԵՄ-ի» խորագրով համաժողովին:

Վերը նշված համաժողովը նվիրված է եղել գործընկերության խորացման և թափանցիկության մեխանիզմների ապահովմանը, մասնավորապես, այս տարվա միջոցառումը նպատակ ուներ բացահայտելու արդյունավետ կառավարման

շրջանակներում թվային լուծումները և այդ համատեքստում հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարը:

Հարկ է նշել, որ «Արևելյան գործընկերությունը հանուն ԵՄ-ի» համաժողովի շրջանակներում ս.թ. դեկտեմբերի 5-ին «Արևելյան գործընկերության ապագա. «Մարտահրավերներին ընդառաջ և քաղաքացիական հասարակության դերն ու հնարավորությունը» բարձրաստիճան հարթակի շրջանակում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հանդես է եկել որպես բանախոս:

Համաժողովին ներկա են եղել և բացման խոսքով հանդես են եկել Մոլդովայի վարչապետ Մայա Սանդուն, Եվրահանձնաժողովի գլխավոր տնօրենի տեղակալ, հարևանության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր քարտուղար Կատարինա Մատերնովան և Եվրոպական և Կենտրոնական Ասիայի եվրոպական գործողությունների ծառայության տնօրեն Լյուկ Դևինը:

Համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով 2018թ. գարնանը ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության միջև ձևավորված սերտ, թափանցիկ և փոխշահավետ համագործակցության հայաստանյան փորձը: Մասնավորապես, նախարարը ներկայացրել է վերջին շրջանում ՀՀ արդարադատության նախարարության և քաղաքացիական հասարակության միջև ձևավորված գործընկերային հարաբերությունները, որոնք լավագույնս արտացոլվեցին Դատական և իրավական բարեփոխումների, հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունների մշակման գործընթացում:

Նախարարը պլատֆորմի մասնակիցներին ներկայացրել է նաև էլեկտրոնային արդարադատության ոլորտում նախատեսվելիք քայլերը՝ անդրադարձ կատարելով Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությանը և դրանից բխող գործողությունների ծրագրով

ամրագրված միջոցառումներին, որոնք առավելապես վերաբերում են էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծմանը և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովմանը:

Բելգիայի Թագավորություն կատարած այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը դեկտեմբերի 5-ին և 6-ին երկկողմ հանդիպումներ են ունեցել Եվրոպական հանձնաժողովի Արդարադատության և սպառողների տնօրինության գլխավոր տնօրեն Թինա Աստոլային, Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման շուրջ բանակցությունների գծով գլխավոր տնօրենի տեղակալ Կատարինա Մատերնովայի, Եվրոպական հանձնաժողովի Հարևանության հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոսի և Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության արևելյան հարևանության հարցերով տնօրեն Լոուրենս Մերեդիթի հետ:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը Եվրոպական հանձնաժողովի Արդարադատության և սպառողների տնօրինության գլխավոր տնօրեն Թինա Աստոլային հետ հանդիպման ընթացքում ներկայացրել է վերջին շրջանում մշակված ոլորտային 4 ռազմավարությունների մանրամասները, որոնք վերաբերել են դատահիրավական բարեփոխումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների բարեփոխումներին, ինչպես նաև մշակման փուլում գտնվող Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության նախագծին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև ԵՄ-Հայաստան ռազմավարական քաղաքականության երկխոսության շրջանակում իրականացվող միջոցառումների ուղղությունները, որոնք վերաբերել են դատական համակարգում անկախության, հաշվետվողականության ամրապնդմանը, Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանը և այլ հարցերի:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի և Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության արևելյան հարևանության հարցերով տնօրեն Լուրենս Մերեդիթին միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են արդարադատության ոլորտում ԵՄ աջակցության ուղղություններն ու ժամկետները: Առանձին անդրադարձ է եղել Ոստիկանության ոլորտի բարեփոխումների Կառավարության տեսլականին: Լուրենս Մերիդիթը շեշտել է, որ ԵՄ պատրաստակամ է աջակցելու Ոստիկանության ոլորտի բարեփոխումներին՝ այլ գործընկերների հետ համագործակցության շրջանակում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ «Արևելյան գործընկերությունը հանուն ԵՄ-ի» խորագրով համաժողովի շրջանակներում ս.թ. դեկտեմբերի 5-ին տեղի է ունեցել ԵՄ-ի և ԱլԳ երկրների ներկայացուցիչների միջև երկկողմ հանդիպումների պանելային քննարկում, որոնցից մեկը վերաբերել է արդարադատության ոլորտում ԵՄ-Հայաստան համագործակցությանը: Պանելային քննարկմանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը եղել է բանախոս և հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը պանելային քննարկման մասնակիցներին ներկայացրել է վերջին շրջանում արդարադատության ոլորտում ԵՄ հետ ձևավորված սերտ համագործակցությունը՝ այդ թվում նաև ԵՄ աջակցությամբ ՀՀ արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերը և ապագա քայլերը:

Հարգանքով,

ՀՀ արդարադատության

Recoverable Signature

X

Rustam Badasyan

նախարար՝ Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

Ռուստամ Բադասյան

10 դեկտեմբեր 2019թ.